ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 մայիսի 2025 թվականի N 555-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիսի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Գորիսի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1053-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հանել «Գորիսի քաղաքային համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և» բառերը.

2) որոշման 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել.

3) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում՝ «143.10» թիվը փոխարինել «141.63» թվով.

4) որոշման N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

5) որոշման N 6 հավելվածում՝

ա. 093-036-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

093-036	1.28								խաղադաշտ

»,

բ. 828-001-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

828-001-01	0.56								փողոց, հրապ.

չմ»,

գ. 828-001-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«

828-001-02	0.19								այլ հողեր

»,

դ. 829-001-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«

829-001-01	0.037								փողոց, հրապ.

չմ»,

ե. 829-001-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն՝

«

829-001-02	0.003								այլ հողեր

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

08.05.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ